ել օգնելու վանական դպրոցի շինութեանը և պահպանութեանը, նոյնպէս և յարգոյ Անդամոյ խորհրդոյ մարդասիրական ընկերութեան Բագուայ, ըստ որում այս թեմի ոսկեհանքն Բագուն է և ամենայն մի գործի համար թէ եկեղեցական, թէ դպրոցական, այլն Զամախեցիք, Առաջնորդն, հոգաբարձուք այլն, դիմել են Բագուայ բարեպաշտ իշխանաց ձեռնտութեանը, ինչպէս Սաղիանի վանքի շինութեան համար, Զամախւոյ օրիորդաց դպրոցի շինութեան համար, և համարեա ամեն բանի համար. և օրհնեալ բագուեցիք իբրև նախապատիւ եղբարք Զամախեցւոց և դաւառեցւոց, առանց խնայելոյ՝ ամեն ազգային հաստատութեան օգնում և օժանդակում են, որոյ մասին և ահա յայտնում եմ իմ լիուլի գոհունակութիւնս և հրապարակական շնորհակալութիւնս, քանզի արժանի են Բագուեցիք օրհնութեան, գովութեան և շնորհակալութեան։

---

Ըստ որում մեր վանօրայքն 'ի սկզբնաւորութենէ անտի հիմնուած ու հաստատուած են դպրոցական կարևորութեան համար, որք և հասցրել են երևելի մարդիկ և ընտիր անդամք Հայութեան. ուստի 'իդէպ համարիմ արտագրել այստեղ ժամանակիս գիտնականաց մէկի նկարագրութիւնն,[1]) որ յարմարագոյն բանիւ նկարագրէ հետևեալ բանիւն։

«Վանօրայք Հայաստանի ծաղկեալ յիւրաքանչիւր դարս ըստ պատմագրաց և ըստ արձանագրութեանց նոցին վանօրէից՝ հիմնեալ հաստատեալ են յատկապէս ի սկզբանէ անտի Քրիստոնէութեան 'ի Հայս յերջանկայիշատակ նախնեաց մերոց յօգուտ հասարակաց և 'ի պէտս իսկապէս կրթութեան Հայ մանկտոյն, և այս առաւելապէս տեսանի յաւուրս մեծին Ներսիսի հայրապետին, որ յետ Լուսաւորչին բարեկարգելոյ զՀայաստան՝ բազմացոյց յամենայն դաւառս զվանօրայս մինչև ըստ ժամանակակից հաւատարիմ պատմչաց՝ հաստատել զթիւ վանօրէիցն ցերկուս հազարս. բայց այսքիկ վանօրայք առաւելապէս 'ի պէտս

---

[1]) Պարոն Կարապետն Կոստանեանց։